



ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտա արութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Փ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

Երբեք չը հասկացան. Հեռագիրներ. Պաշտօնա-
կան հաղորդագրութիւն. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Գտնէ մի քանիք. Նամակ Ազգային. Նամակ
Նոր-Քուստայից. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին
տեղեկութիւններ. Նամակ Գերմանիայից. Ար-
տաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. ԲՈՐՍԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ԶԼԱՍԿԱՅԱՆ

Շուշու թեմական դպրոցը այս տարի էլ
ունեցաւ «պատմութիւն»: Մեր ընթերցող-
ները «Մշակի» հաղորդած լուրերից պարզ
հասկացան, որ այս անգամ էլ «պատմու-
թիւնը» մի և նոյն հանգամանքներից
ծնվեց: Դպրոցի հոգաբարձութիւնը, ձեռք
առած իր կանոնադրութիւնը, գէպի մի
կողմ էր ձգում, իսկ նախագահը, իբրեւ
ներկայացուցիչ բոլորեւնի հակառակ շա-
հերի, ձգում էր գէպի միւս կողմ: Էջմիա-
ձին էլ, իբրեւ այդ հիմնարկութեան բարձ-
րագոյն իշխանութիւն, ունի, կամ ուզում
է ասել թէ ունի իր յատուկ «փօլիթի-
քան»: Այդ բոլորի հետեւանքն է մի կա-
տարեալ քառս, որի մէջ խուզարկութիւն
անողը կը գտնէ ամեն ինչ, սկսած մանր
խնարիքներից, բայց երբեք չի հասկանայ
ամենակարեւորը—թէ ո՞րն է արդարու-
թիւնը:

Այս կամ այն ըէժիմը բնական երեւոյթ
է որոշ հանդամանքների մէջ: Մի յայտնի
գործակից ծառայող մամուլը կարող է ան-
բաւական լինել մի ըէժիմից և համակրել
մի այլ ըէժիմին: Դա սկզբունքի հարց է,
բաւանութիւնների ագնիւ մրցութիւն է:
Քայց այս դէպքում մի քանի գէն գնեց
սկզբունքը. թող մի քանի էջմիաձիւնը ար-
դար լինի, կարծելով թէ ժողովրդի մաս-
նակցութիւնը կրօնական-վարչական գոր-
ծերի մէջ սաստիկ թուլացնում է կղերա-
կանութեան կատարյալ շահերը: Մենք
միշտ կը բողոքենք այդպիսի հասկացողու-
թեան դէմ: Ինչպէս է միշտ բողոքել ենք:
Քայց և այդպէս, այն ըէժիմը, որի թշնա-
մին ենք մենք համարում մեզ, կը լինի
մեզ համար օրինական երեւոյթ, եթէ նա
չէ խախտում ամենից կողմից և բոլոր
հասկանալիների մէջ տարբերակ և անվի-
ճելի ծանաչված հասկացողութիւնները:
Վաթսուական թաւաններից մեր դպրոց-
ները կառավարվում են ժողովրդի ներկա-
յացուցիչների ձեռքով. կայ մի որոշ սիւս-
տեմ, որ որոշում է կղերի և աշխարհականի
իրաւասութեան և պարտաւորութիւնների
սահմանները այդ գործի մէջ: Դուք կարող
էք փաստաւոր համարել այդ սիստեմը, դա
ձեռք իրաւունքն է, որ թող չէ տարիս ձեզ բոլո-
րովին ուրիշ կարգեր հաստատել: Եւ մենք կըն-
դունենք այդ իրաւունքը, սակայն նախապէս
կը պահանջենք ձեզանից բացարձակ շիտա-
կութիւն, կարուկ խօսք, խիստ հետեւողա-
կանութիւն: Միայն այդպէս լինելով դուք
կունենաք մեզ ձեզ հակառակորդ սկզբուն-
քի, արդար և աղին պայքարի ասպարէ-
զում:

Արեւելի կարգերը ինչու են մահաց-
նող, յախտնական անշարժութեան և
քարացման դրաւական ծանաչված ամբողջ
քաղաքակրթութիւնը աշխարհում: Այն պատ-
ճառով, կասենք մենք, որ Արեւելքը երբեք
չէ կարողացել որոշել երկու հասկացողու-
թիւն—օրէնք և կամայականութիւն: Օ-
րէնքը հաստատ, ուժեղ կարգն է, որ ընդ-
հանում է ամեն մէկի և ամենի համար.
նա կարող է լինել սխալական, խիստ, յե-
տադէմ, բայց և այդպէս, նա իբրեւ բա-
ցարձակ տէրն է. նա իր անկողնապահ,
քմահաճութիւնները չը ծանաչող, անողոր
հոգով աւելի շուտ կը կազմէ մի հակա-

ռակ հոսանք կեանքի պահանջներից և
ժամանակի հասկացողութիւններից, ու այդ-
պէս ինքը ջանքեր կանէ իրան խորտակե-
լու, ոչնչացնելու համար: Իսկ կամայակա-
նութիւնը—դա մտքերի, հասկացողութիւն-
ների, աստուածների մի կատարեալ խառ-
նուրդ է. նա թունաւորում է հրապարա-
կական արդարութեան զգացմունքը, վիժե-
լով այն անբարոյականացնող անկախութիւ-
նը թէ կարող է այս էլ լինել, այն էլ լի-
նել. նա վերացնում է պարտք և իրաւունք
ձանաչելու մեծ խորհուրդը, առանց որի
գոյութիւն ունենալ չէ կարող որ և է
բարեկարգութիւն:

Չարաչար սխալվում են նրանք, որոնք
կարծում են թէ ժամանակակից հասա-
րակութիւնները գոյի են օրինականու-
թեան զգացմունքից: Նոյն իսկ զարգացման
ստոր աստիճանների վրա կանգնած հա-
մայնքները փափաղում են որոշ ու պարզ
գրութիւնների մէջ ապրել: Մարդկութիւնը
վաղուց և շատ վաղուց է սովորել երես
զարձակ կամայականութիւնից, համարելով
նրան կուլտուրական զարգացման անհաշո-
թիւն: Այս պատճառով ամեն տեղ անո-
ղորմ մի ճշմարտութիւն կայ—այս կամ
այն սիստեմին գոյութեան իրաւունք տալ
օրէնքի և միայն օրէնքի միջոցով: Ուրիշ
կերպ չէք կարող ցոյց տալ թէ ունեք մի
բաւանութիւն, որ ուզում էք հաստատ
պահել յանուն ընդհանուր կամ նոյն իսկ
կատարյալ բարոյութեան:

Էջմիաձիւնի վարիչները այս վերջին տա-
րիները մի հազուադէպ եռանդով ապա-
ցուցանում են որ որոշ բացարձակ բաւա-
նութիւն չունեն: Այդ պարզ երեւում է
մանաւանդ նրանց գրութեանը, որոնց
մէջ ամենանեղ կղերական խաւարամու-
թեան հետ երեսն են գալիս մտքեր, ո-
րոնք զարբերից ի վեր թշնամի են եղել
խաւարապաշտութեան: Յայտնի է, որ ոչ
ոչ մի տեղ չէ յարգում այդ բացմաս-
տուածութիւնը, այլ ասում է նրան իսկ
ի՞նչ է լինում իրականութեան մէջ: Ան-
ցեալ տարի Բագրատ մի կողմից ծխական
դպրոցի հոգաբարձութեան և միւս կողմից
թեմական առաջնորդի ու թեմական տես-
չի մէջ անհամայնութիւնների ծագեցին:
Էջմիաձիւնը հեռացելով թէ առաջնորդին և
թէ թեմական տեսչին դպրոցի գործերի
մէջ խառնվելու իրաւունքից, և ամբողջ
կառավարութիւնը յանձնեց հոգաբարձու-
թեան, թէ և ծխական դպրոցների կանոնա-
դրութիւնը այդպիսի իրաւունք չէր տալիս
հոգաբարձութեան: Իսկ այս տարի Շուշու
հոգաբարձութիւնը, որին գոյութիւն ու-
նեցող օրէնքը տալիս է ուսուցչական
խումբ կազմելու իրաւունքը, մի կողմ է
թողնված և ստացել է լոկ հանդիսատեսի
պաշտօն:

Դուք պարտաւոր էք որոշ օրէնք ունե-
նալ: Նախ ինքներդ յարգեցեք գոյութիւն
ունեցող օրէնքը, ապա իրաւունք կունենաք
պահանջելու, որ յարգեն այդ օրէնքներով
հաստատված կարգերը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Ուսուցչական կառավարութեան)

Կ. Պ օ լ ի ս, 1 սեպտեմբերի: «Հայկական
կոմիտեան հաղորդեց դեպպաններին, որ
եթէ գիշերային կողպատումները և հայե-
րին ջնջելու միջոցները կը շարունակվեն,
—կոմիտեան կրկին կհիմնադրութեան նշան-
ներ կը ցոյց տայ: Նախազգուշութեան մի-
ջոցներ ձեռք են առնված: Մարշալ Շաքիր
փաշան, սուլթանի զինուորական ղեկաւա-
նան զլխաւորը, նշանակված է հայերին
զաղթեցնելու համար կազմված յանձնա-
ժողովի նախագահ: Այդ յանձնաժողովի

նիստերին մասնակցում են դեպպանների
խորհրդանները: Մի և նոյն ժամանակ բազ-
մաթիւ կալանաւորութիւններ շարունակ-
վում են. ոստիկանական վարչութիւնները
և մի քանի զօրանոցներ լցված են կալա-
նաւորներով:

Կ. Պ օ լ ի ս, 3 սեպտեմբերի: Դեպպաննե-
րը հաւաքվեցին նոր խորհրդակցութեան
համար, այն սպառնալի նամակի պատճա-
ռով, որ ստացված է հայկական կոմի-
տէից:

Լ օ ն դ օ ն, 3 սեպտեմբերի: «Times» լը-
րագիրը, քննելով Թիւրքիայի դէմ սկսված
թշնամական շարժումը, ասում է, որ զի-
նաւորված միջամտութիւնը թիւրքաց ներ-
քին գործերում համարեա թէ, անկասկած,
առաջ կը բերի մեծ կոտորած Թիւրքիայի
շատ մասերում. զինուորված միջամտու-
թիւնը Անգլիայի կողմից, առանց պետու-
թիւնների հետ նախապէս համաձայնու-
թիւն կայացնելու, նոյնպէս կարող է իւ-
րաքանչիւր քաղաք եւրոպական պատերազմ
առաջ բերել:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂԱՐԴԱԳՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի թիւրքաց դեպպանութիւնը ու-
ղարկել է «Новое Время» լրագիրին Կ. Պ օ լ ի ս
ստացած հետեւեալ պաշտօնական հաղորդագրու-
թիւնը.

«Կայսերական կառավարութիւնը որոշել է
անցաւոր դատի երկարելու հայ յեղափոխական-
ներին, որոնք, մասնակից լինելով Կ. Պ օ լ ի ս վեր-
ջին դէպքերին, կալանաւորված են, ինչպէս և
այն անձանց, որոնք թղթ են տուել իրանց, ա-
ռանց սրտաճառի սպանել խաղաղ բնակիչներին
և կողպատումներ անել, և որոնք ձեռքաւարկված
են ոստիկանութեան ձեռքով: Նրանք ամենքը,
հանգամանքներին նայելով, կենթարկվեն օրէն-
քով սահմանված ամենախիստ պատիժներին:

«Այն ոստիկանական ագենտները, որոնք ա-
կանատես լինելով չարագործների կատարած
յանցանքներին, չեն դիմադրել, կամ թող չեն
տուել այդ ոչնչագործութիւնները, նոյնպէս դա-
տի կենթարկվեն և օրինակելի կերպով կը
պատժվեն: Սակայն, ի նկատի ունենալով, որ
սովորական դատարաններով գործը ընկել կեր-
կարաձգվի, որովհետեւ այն ժամանակ ընկող
գործերը պէտք է անցնեն բոլոր օրինական ինս-
տանցիաներից, ուստի որոշված է հաստատել
արտակարգ դատարան, որը յատկապէս պէտք է
ընեն այդ գործերը: Գնումութիւնը հրապարակով
կը լինի և դատարանի վճիռը վերջնական:

«Որովհետեւ վերջին ժամանակներս տեղի ու-
նեցած ոճիրների մեծ մասը կատարել են եկեղ-
մարդիկ, որոնք պատկանում են զանազան դա-
նակաբերին, և որոնք, իբրեւ եկեղ տարր, արա-
մաղիւր են ապստամբութեան և կողպատումնե-
րի, ուստի ոստիկանութեան հրամայված է աք-
տրել նրանց իրանց հայրենիքը:»

Թիւրքաց դեպպանը այն լեզուով է խօսում,
որ Թիւրքիան չը ծանաչող անձը կը կարծէ, թէ
Թիւրքիան մի օրինաւոր եւրոպական պետութիւն
է, ունի այնպիսի դատարաններ, որոնք ընդու-
նակ են յանցանքը պատժել և անմեղութիւնը
պաշտպանել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՆԷ ՄԻ ՔԱՆԴԻՔ

Իրգայի հնագիտական ժողովի առաջին նիս-
տում նախագահ կոմսուհի Ուլարովա իր ճա-
ռի մէջ, որ նուիրված էր հնագիտութեան ու-
սումնասիրութեան, չեղանց այն ակտիւ հանգա-
մանքի վրա, որ Ռուսաստանի շատ տեղերում

դեռ վայրենի կերպով են վերաբերվում դէպի
հնութեան դանազան յիշատակները և փչացնում,
ոչնչացնում են նրանց, անուղղելի վնաս հասց-
նելով գիտութեան: Բնորոշ և տիպիկական նկար-
ներ ցնջում են, պատմական դամբարաններ
քանդում են, ամբողջ շինութիւններ կործանում
են, առանց քաշվելու և մտածելու:

Այն դանազան, որ անում է կոմսուհի Ուլա-
րովա եւրոպական Ռուսաստանի մասին, աւելի
ես մեծ չափով պէտք է ասվի մեր Անգլիկական
մասին, որտեղ հնագիտութեան համար մեծ ար-
ժէք ունեցող յիշատակարաններ ամեն օր փչաց-
վում, կործանվում են, առանց որ և է արգելի և
առանց որ և է հետք թողնելու գիտական հե-
տադատութիւնների համար:

Նոյն իսկ այնպիսի կենտրոն ճանաչված
տեղում, ինչպէս է Էջմիաձիւնը, տեղեւոյն յա-
տուկ համարձակութեամբ սուտղի և ծեփի տակ
են անցել այնպիսի նկարներ, որոնք ունեն
արուեստի զարգացման պատմութեան հա-
մար յայտնի նշանակութիւն: Միայն այս դա-
րը ընթացքում Էջմիաձիւնը նման մի հիմնադ-
րութիւն կարող էր անասելի մեծ ծառայու-
թիւն մատուցած լինել կովկասեան հնագիտու-
թեան, եթէ կազմակերպէր այդ գործը այնպէս,
ինչպէս թեւադրում է գիտութեան ներկա դրու-
թիւնը:

Եթէ ուսումնասիրել չէք կարող, եթէ հայկա-
կան արուեստի, ճարտարապետութեան, պատ-
մութեան համար դուք չէք կարող չանցործել
յիշատակարանները, դոնէ մի քանիք նրանց, մի
այլակերպէք, որպէս զի վաղը կամ միւս օրը, երբ
կը գայ եւրոպական գիտնականը, գէթ նա կա-
րողանայ անարատ տեսնել և հետազոտել եղածը
և յետոյ մշակված ու լուսաբանված տալ դար-
ձեալ մեզ:

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Օգոստոսի 15-ին

Ազգութի չըջկայքում արդէն երևացել են
տարախոյսիկ հիւանդութիւններ, ինչպէս են տիֆ
և դիֆթերիա և, ինչպէս ասում են, Յյնայում
արդէն մահվան դէպք է եղել դիֆթերիայից: Բա-
րեբախտաբար, այնտեղ է գտնվում տեղացի բը-
ժիշկ Գարեգին Սարգսեանց, որը ամէն օգնու-
թիւն է անում Վերգայիներին: Նա արդէն հե-
ռագրով դիմել է ուր հարկն է, խնդրելով հա-
կադիֆտերիտային չիֆուկ ուղարկել: Այդ հիւան-
դութիւնը հեշտութեամբ կարող է մուտք գոր-
ծել և մեր գիւղը, քանի որ անդադար երթիւնե-
կութիւն է լինում: Սակայն ինչպէս է վերաբեր-
վում ազգութեան դէպի մասնակցների այդ սարսա-
փելի թշնամին, աշխատում է զինվել նրա դէմ,
թէ ոչ: Յաւելով այնտեղ խոտովանները, որ դեռ
մինչև այսօր ոչ մի քաղ չէ արված այդ ուղ-
ղութեամբ: Ազգութեան իր անտարբերութիւնից
կը սթափվի այն ժամանակ, երբ այդ հիւանդու-
թիւնը, ներս մտնելով մեր գիւղը, ծնողների
գրկից կը լինի նրանց սիրասուն զաւակներից մի
քանիսին: Բայց ինչու բանը մինչև այդտեղ հասց-
նել. չէ որ աւելի հեշտ է հիւանդութիւնը իր
սաղմում խեղդել, քան թէ, երբ նա արդէն ըն-
դարձակ ծաւալ կը լինի ստացած: Մեր բախկից
ներկայումս մեզ մօտ հիւր են գտնվում տեղա-
ցի երեք բժիշկներ, սակայն նրանք ինչ կարող
են անել առանց դեղի:

Մեր կարծիքով, որ առաջ հարկաւոր է մի քա-
նի սրուակ հակադիֆթերիտային չիֆուկից բերել
տալ, որպէս զի հարկաւոր դէպքում իսկոյն
գործադրեն:

Ամբողջ տարի առանց բժշկի մնալուց յետոյ,
այսօր մենք ունենք երեքը, որոնք ժամանակա-
ւոր հիւր են եկել իրանց ծնողաւայրը: Օգոստ-
բաղելով նրանց ներկայութիւնից, ինչպէս լսում
ենք, հասարակութիւնը դիմումն է արել նրան-

Մինչև- ՇՈՒՆԱԳ ԻՐԻՅ ԺԵՂ ԳՐԱՄ ԵՆ. «ՕԳՈՍՏ»

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.